



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

448


ԴԵՐ № 330
Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

U P T E R N B 380

ԵՐԵՎԱՆ

364

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԻ ԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ն 139
ՄՈՍԿՎԱ 1924

80 НРЧБР № 330

№ ԼԵՆԻՆՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

4

Ա. ԿԱՐԻՆՑԱՆ

ԼԵՆԻՆԸ

ՅԵԿ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ





280-Ч92

Главлит № 29463

Тираж 600

Тип. Госиздата ССР. Армении, Москва, Арм. пер. № 2.

ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1.

Մարքսիստական գրականության մեջ Լենինից առաջ յեփս արծածվել ե պետության պրոբլեմը։ Ֆր. Ենգելսի մենագրությունը «Բնտանիքի, սեփականության և պետության ծագման» մասին նվիրված ե մասնավորապես այդ խնդրի քննությանը։ Անուղղակի կերպով միշտ յեզրույն հարցի տարբեր կողմերի լուսաբանությանն են նվիրված նայեվ Մարքսի ու Ենգելսի պատմական հետազոտությունները։ Հետագայում պետական տարբեր ձեզերի վերլուծությունը և պատմական տեսությունը այս կամ այն շափով տրվել ե Կառլցկու, Մերինգի, Պակրովսկու և ուրիշ մարքսիստաների աշխատությունների մեջ։ Յեվ այսուամենայնիվ, չնայած բավական ստվար այդ գրականությանը — պետության մարքսիստական թեորիան և պետական կազմակերպության առարկայական վերլուծությունը առաջադրվել ե շատ ավելի ուշ, Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին, Լենինի յերկերի և գործերի մեջ։

Հենինի հեղափոխական ուսմունքը պետության մասին հիմնովին քանդում եւ «Իրավունքի փիլիսոփայության» հին տեսաբանությունը և միանգամայն նոր ուղիներ եւ գծում իրավագիտության համար։ Նրա հայտնի «Պետություն և Հեղափոխություն»*) մենագրությունը այդ տեսակետից գլուխութունը ե վոչ միայն վորպես հասարակագիտական մի ուսումնասիրություն, այլև վորպես իրավագաղական (ինչպես կընորոշեյին իրավագետները) տրակտատ։ Յեվ այդպես լինելով, նա կըտրական կերպով լուծում է միաժամանակ թե՛ պետության և թե՛ իրավունքի պրոբլեմը։

* * *

Թե վորքան խճճված եր այդ հարցը հին ժամանակ—նախահեղափոխական շրջանում, տեսնում ենք մենք հենց իրավագիտության նոր տեսությունից։

Անցյալում բարձրագույն դպրոցներում դա-

*) Հայերեն հրատարակությունը լույս է տեսել 1920-ին ՄՈՍԿՎՅՈՒՄ Վահան Տերյանի թարգմանությամբ յեվ Ա. Մարտունու առաջարանով։ Միյելնույն թարգմանության յերկրորդ հրատարակությունը լույս է տեսել ՆՅՈՒՅՈՒՆԻՑ նաև 1923-ին։

սավանդվում եր «Իրավունքի փիլիսոփայության պատմություն» անունը կրող մի առարկա։ Իրապես դա քաղաքական ուսմունքների պատմական տեսության նման մի բան եր, այն տարբերությամբ միայն, վոր այդ տեսությունը համեմված եր սովորաբար զանազան տեղի և անտեղի փիլիսոփայություններով իրավունքի, բարոյականության, հասարակության և պետության մասին։ Իր բոլոր այդ հատկություններով հանգերձ դա բավական ուշագրավ մի առարկա յեր։

Հետաքրքրական եր նա հենց նրանով, վոր խտացած կերպով տալիս եր նախակապիտալիստական և կապիտալիստական շրջանի քաղաքական-իրավական ուսմունքների սիստեմատիկ տեսությունը և միաժամանակ դրա հետ ամենասուր կերպով ցուցադրում եր իդեալիստ և ելլեքտիկ մտածողների հակասությունները։

«Իրավունքի» այդ պատմությունը չափազանց ակնհայտնի կերպով ցուցադրում եր հին հասարակագիտության անանկությունը և հակասություններով լի բովանդակությունը։

Թերթելով այդ պատմության եջերը, մենք ավելի քանի բան բացորոշ կերպով տեսնում ենք, վոր յերկար դարերի ընթացքում՝ վոչ մեկը հասարակեաներից և իմաստասերներից չի կարողացել տալ «իրավունքի» և «պետության» ճշշ-

գրիտ մեկնությունը:

Զի կարողացել այդ անել և XIX—XX դարաշրջանի գիտությունը:

Բուրժուական միտքը այժմ ել դեպերում ե անպտուղ հակասությունների մեջ—և ամենալավ պարագայում բավականանում ե առաձգական ու խիստ անորոշ բնորոշումներով։ Այդ հանգամանքը նկատել են նույնիսկ կապիտալիստական հասարակության ավելի «հեռատես» ներկայացուցիչները։ Առանձնապես մանրամասն շեշտել ե այդ կետը ոռւս հայտնի իրավագետ Պետրաժիցկին։

Դեռ 1905—08-ին, սեփականատիրական հասարակության այդ համոզված տեսաբանը սկզբնական իր աշխատություններից մեկում կանգնել ե հոգեբանության տարբեր տեսաբանների հայացքների քննության վրա—և հենց այդ առթիվ արձանագրել ե XIX-րդ դարի իրավագետ-մտածողների անորինակ հակասություններն ու թեքումները։ Հետագայում միյեմսույնը շեշտել ե նա առանձին ուժով իր հայտնի «իրավունքի և պետության տեսություն» յերկինատոր ուսումնասիրության մեջ։ Այդտեղ յեկա յելնելով «հոգեբանական» ուրույն մեկնակետից՝ ոռւս իրավագետը ցուցադրում ե հին հասարակության կատարյալ անկարողությունըև մնանկությունը։

Ահա հենց «քննադատական» այդ հայտառարություններով ել ե. Պետրաժիցկու տեսությունը ներկայացնում է սիմպտոմատիքական վորոշ արժեք:

Այսպես թե այնպես «իրավունքի հոգեբանական թեորիայի» հեղինակն ինքը իդեալիստ մտածող ե վոտքից մինչեվ գլուխ, բուրժուական գաղափարախոս և մարքսիզմի անհաջող հակառակորդ: Դրա համար ել նրա խոստովանությունները և հայտարարությունները հին իրավագիտության սնանկության մասին ստանում են առանձին արժեք, վորպես բուրժուական գիտության հայտարարություն:

Ինչ վերաբերում է Պետրաժիցկու սեփական իրավապատմական հայեցողությանը, պետք ե նկատել, վոր այդ տեսակետը նույնքան անորոշ և հակասական ե, ինչպես և կապիտալիստական աշխարհի ուրիշ գաղափարախոսների աշխարհայեցողությունը: «Իրավունքի» և «պետության» իրական արմատները հիշյալ դպրոցը վորոնում եր վոչ թե հասարակական հարաբերությունների, այլ հասարակությունից կտրված մարդանհատի բնածին հոգեբանության և այդ հոգեբանության վորոշ տարրը կազմող հատուկ «զգացումների» կամ ինչպես Պետրաժիցկին

ինքն եր ասում—եմոցիաների մեջ։

«Իրավունքը այդպիսով հանդիսանում եր կարծես կայուն և անշարժ մի յերեվույթ, վորը քննվում եր բացառապես վորպես հոգեբանական ֆենոմեն։ Մեկնելով հենց այդ գերազանցորեն իդեալիստական տեսակետից՝ ուսւ իրավագետը պետության արմատներն յեվս վորոնում եր բացառապես մարդկանց անհատական-հոգեկան ապրումների մեջ։

Առաջին նվագ «իրավունքի հոգեբանական դպրոցի» այդ տեսությունը թվում եր բավական համոզիչ և հետեւողական։ Սակայն և այնպես, չնայած «որամարանական» իր կառուցվածքին, Պետրաժիցկու վոյջ տեսությունը խոցելի յեր սկզբ-ըից մինչև վերջ։ Սխալ եր նա հենց նրա համար, վոր կատարելապես վոչ մի պատասխան չեր տալիս այն հարցին։ թե ինչպես ե զարգանում պետությունը, ինչպես են փոփոխության յեն-թարկվում պետության ձեվերն և հասարակա-կան-իրավական հասկացողությունները պետու-թյան մասին։

Պետրաժիցկին և նրան հետեւող իրավա-գետները քննում եյին իրավունքը, վորպես կա-յուն և անշարժ մի յերեվույթ—իր ստատի-քական դրության մեջ։ Համարելով իրավային եմոցիան բացառապես անհատական հոգեբանու-

թյան արտահայտություն, վերոհիշյալ գիտնականները անհրաժեշտաբար յետ եյին նահանջում և կատարելապես անպատճական եյին թողնում պետական ձեվերի փոփոխության գործոնների հարցը:

Այսինչ, ամենակարեվորը հենց դա յեր:

Խնդիրը հենց գրանումն ե, վոր իրավական
ուսմունքների և հասարակական-քաղաքական
տարրեր հոսանքների հարաշարժ զարգացումն
ու շարժումը հիմնովին քանդում ե իդեալիստ
իրավագետների բոլոր սրամիտ տեսակիուն-
ները:

Իրավունքի և պետության դիմիկան (շարժումը), նրա անընդհատ այսափոխութը և կարգացումը ցուցադրում ե աներկեալիութենական «պետությունը» վերացական իրավահոգերանական յերեվոյթ չե, այլ հասարակական բաղխումների անմիջական զարգացման արդյունք և դասակարգային տիրակալության վորոշ գործունեական պահանջանք է:

«Մարդը—հասարակական կենդանի յե»—
հունական մեծ իմաստունների այդ հատու բնու-
րոշումը նորից և նորից թելադրում ե մեզ
հիշել, վոր վոչ մի «գաղափար» և վոչ մի «հոգե-
կան» ապրում չի կարող ստեղծվել և զարգանալ
անկախ հասարակական միջավայրից։ Հենց այն
հանգամանքը, վոր իրավունքի հոգեբանական

դպրոցի հիմնադիրը, ինքը, հակառակ իր բազմաթիվ խոստումներին, չե կարողացել տալ «իրավունքի և պետության» սոցիալական զարգացման պատմությունը—ավելի քան լավ ապացուցում ե այն, վոր վերոհիշյալ դպրոցը անկարող ե բացատրել և մեկնաբանել «պետության» կազմակերպման և զարգացման հարցը:

Առաջին անգամ այդ խճճված պլրոբլեմի կտրական լուծումը տվել ե, ինչպես հայտնի յե, Մարքսը դիալեկտիքական մատերիալիզմի ուսմունքով: Արդեն իր հայտնի «Քաղաքատնտեսության մի քանի դրությունների քննադատության» հառաջաբանի մեջ Մարքսը գծել ե իդեոլոգիայի կախումը «հասարակական կացությունից»: Եեշտելով հասարակական միջավայրի և արտադրական հարաբերությունների դերը պատմական զարգացման պրոցեսում, նա դրանով արդեն տվել ե նայել իրավագետներին զբաղեցնող հիմնական պլրոբլեմի լուծման բանալին:

Հետագայում արդեն, ինչպես շեշտեցի վերը, Մարքսի կարևոր այդ դրությունը ավելի մանրամասն կերպով հիմնավորվել և լուսաբանվել ե թե նրա «Պատմական հողվածներում» և թե մասնավորապես Ենգելսի պատմասոցիոգիական հողվածներում: Փարիզյան 1871

թվի կոմունայի պատմությունը և գերմանական 1848 թվի քաղաքացիական պատերազմի այն տեսությունը, վոր տրվել և Մարքս-Ենգելսի հիշված հոդվածների մեջ, այժմ ել ամենահիմնական պատմական ուղեցույցն և «իրավունքի և պետության» զարգացման պրոցեսի մատերիալիստական լուսաբանության համար։

2.

Գուցե հենց դրա համար ել Լենինը իր ուսումնասիրությունը հիմնավորում է գլխավորապես հենց այդ պատմական ուսումնասիրությունների մեջ գծված հիմունքներով։ Նրա աշխատության քննադատական այդ մասը մարքսիստական վերլուծության փառավոր նմուշներից մեկն եւ Հենվելով հենց Մարքսի և Ենգելսի հայացքների վրա, Լենինը, ավելի քան համոզիչ կերպով, ապացուցում է այն, վոր գերման սոցիալ-դեմոկրատիայի, և առնասարակ սոցիալ-դեմոկրատիայի պաշտպանած պետության թեորիան ներկայացնում է իրենից մարքսիզմի անորինակ լեղաթյուրում և աղավաղում։

Ոպորտունիստ-մարքսիստները դիտավորությամբ կրծատել են Մարքսին, դեն են նետել նրա և Ենգելսի հոդվածներից հեղափոխական

բնույթ կրող կետերն և ստեղծել են խիստ չափավոր աղճամ և բեգորմիստական մի թեորիա:

Դերման-սոցիալ դեմոկրատիայի տեսաբան Կառլին իր պատմական հետազոտությունների մեջ հաճախ կանգնել ե նայել պետության գաղակարգային բովանդակության վրա և հակառակ իր այժմյան տեսաբանությանը շեշտել ե, վոր ամեն մի պետություն—դասակարգային տիրապետության որգան ե:

Սակայն և Կառլին, և նրան հետեւող ոպորտունիստ-մարքսիստները խուսափել են այդ կետից բղխող անմիջական յեզրակացություններն անել: Դեռ ավելին յեզմ: Նրանք ստեղծել են բուրժուական դեմոկրատիայի, ռամկավարական հանրապետության և ընդհանուր ընտրողական իրավունքի դրական արժեքներն փառաբանող մի հոսանք:

Լենինը իր անողոք քննադատությամբ մերկացնում է ամենից առաջ բուրժուական դեմոկրատիայի հենց այդ պաշտպաններին: «Պետության և հեղափոխության» հենց առաջին մասում կանգնելով ռուս վետրվարյան հեղաշըրջման «հերոսների»—Պալչինսկիների, Զերնովսկի, Ծերեթելիների վրա շեշտում ե, վոր «դեմոկրատիկ հանրապետությունը կապիտալիզմի լավագույն քաղաքական կաղապարն ե» (Պետու-

թյուն և Հեղափոխություն», հայեր. թարգ. եջ 18): Էստ եյության դա բղխում եր մարքսիզմի այլուրենից: Պէտական ձեվերի պատմությունը ինքը լավագույն կերպով հաստատում եր այդ թեզի ճշտությունը: Սակայն և այնպես, լենինի կտրուկ դիտողությունը խիստ տեղին եր, վորովհետեւ փետրվարյան հեղաշրջման որեւ ընդ հենց մարքսիզմի անունով ել հիմնավոր վում եր «ռամկավար հանրապետության» վերացական արժեքը:

Ավելի յեպս սուր են լենինի դիտողություննաերը Ենգելսի «Անտի-Դյուրինգ»-ում բերված հայտնի այն պարբերության առթիվ, վոր այնքան չարաչար կերպով խեղաթյուրվել ե մարքսիստ—ոպորտունիստների կողմից:

«Պէտության և Հեղափոխության» մեջ այդ կտորը բերված ե ամբողջությամբ: Այդտեղ Ենգելսը մերկացնելով պետության դասակարգ ային բնույթը միաժամանակ շեշտում ե, վոր «յերբ պետությունը իրոք դառնում ե վողջ հասարակության ներկայացուցիչ՝ նա ինքն իրեն ավելորդ ե դարձնում»: Այն որվանից յերբ չի լինի վոչ մի հասարակական դասակարգ, վորը պետք ե ճնշման մեջ պահել, այն որից, յերբ դասակարգային տիրապետության հետ միասին, տրտագրության մեջ այժմ իշխող անարխիայից

ծագող անհատական գոյության կովի հետ
միասին կչքանան այն ընդհարումներն ու եկա-
ցեմները, վորոնք այդ կովից են ծագում, այդ
իսկ որվանից ճնշելու բան չի մնա, ուրեմն և
կարիք չի լինի հատուկ ուժի—պետության»...
Հետագա տողերում Ենգելսը ինչպես հայտնի
յե, խոսում ե պետության «մահացման» մա-
սին: Ենգելսի հենց այդ դիտողությունն ել «պե-
տության մահացման» մասին դիտավորու-
թյամբ աղավաղվել ե ոպղորտունիստ-մարք-
սիստների կողմից և հիմք ե ծառայել հեղափո-
խության ժխտման համար: Յեզ ահա լենինը
կանգնելով Ֆր. Ենգելսի հենց այդ նկատո-
ղության և մարքսիզմի անորինակ խեղաթյու-
րման վրա տալիս ե ամենահատու և սուր խոս-
քերով պետության հետեւյալ բնորոշումը:

«Իրոք,—կարդում ենք «Պետության և հեղա-
փոխության» մեջ», —Ենգելսն այստեղ աչքի
տուած ունի բուրժուազիայի պետության «վո-
չնչացումը» պլողետարական հեղափոխության
միջոցով, իսկ մահացման մասին առ-
ված խոսքերը վերաբերում են պրո-
լետարական պետության մնացումներին՝ սոցիալական հեղափո-
խությունից հետո: Բուրժուական պե-
տությունն ըստ Ենգելսի վոչ թե «մահանում»

ե—այլ «վոչնչանում» եւ Յեվ դրանից հետո յե, վոր մահանում եւ պրոլետարական պետությունը կամ կիսապետությունը («Պետություն և հեռափոխություն» եջ 22—23): Ապա քիչ ցած նույնքան սուր կերպով Լենինը ընդգծում է «պետության» կազմակերպական դերը դաստկարգային բաղխումների պրոցեսում:

«Պետությունը ճնշման հատուկ ուժ ե»: Այս հոյակապ ու վերին աստիճանի խոր բնորոշումը Ենգելսը տվել եւ այստեղ կատարյալ պարզությամբ: Յեվ դրանից բղխում եւ, վոր բուրժուազիայի՝ պրոլետարիատին «Ճնշելու հատուկ ուժը», միլիոնավոր աշխատավորների ճնշումը մի բուռն ունեվորների ձեռքով, պիտի դառնա «Ճնշման հատուկ ուժ» պրոլետարիատի ձեռքում բուրժուազիային ճնշելու համար (պրոլետարիատի դիկտատուրա): Հենց դրանում ե կայանում «պետության վոչնչացումը իրը պետություն»: Հենց դրանում եւ կայանում հասարակության անունից արտադրության միջոցները նրանց տեր լինելու նպատակով վերցնելու «ակտը»: Յեվ ինքն ըստ ինքյան ակներեվ ե արդեն, վոր մի (բուրժուական) «հատուկ» ուժի մի այլ (պրոլետարական) հատուկ ուժի փոխվելը վոչ մի կերպ չի կարող կատարվել «մահացման» ձեւվով (եջ 23)... «Դ եմ ու կը ատիան, կար».

դում ենք նույն տեղը, նույն պես
պետությունն ե, և ուրեմն նա յեվ
կչքանա, յերբ պետությունը չքանա:
Բուրժուական պետությունը միայն
հեղափոխությամբ կարող է վոչըն-
չացվել: Պետությունն ընդհանրապես, այ-
սինքն՝ լիակատար դեմոկրատիան կարող ե
միայն «մահանալ» («Պետություն և հեղափո-
խություն». եջ 24):

Մենք դիտավորությամբ բերում ենք ամ-
բողջությամբ բոլոր այդ ցիտատները: Բանվո-
րագյուղացիական պետության մեծ հիմնագիրի
դիտողությունը պետության «մահացման» և
«վոչնչացման» մասին, ինչպես տեսնում ենք
խիստ, կարեվոր և գեղին սոցիալիստների խակա-
կան բեֆորմիստական եյությունը բնորոշող մի
նկատողություն ե: Սոցիալ-դեմոկրատները, ինչ-
պես ցույց ե տալիս Լենինը, իրենց քննություն-
ների ժամանակ գրեթե միշտ հենվում են խեղա-
թյուրված մարքսիզմի վրա և հենց այդ մարք-
սիզմի անունով ել հիմնավորում են իրենց հա-
կապրոլետարական գործելակերպը: Յենելով հիմ-
նական այն դրությունից, վոր ժամանակակից
պետությունը աստիճանական մահացման յեն-
թակա մի որդանիզմ ե, սոցիալ-դեմոկրատներն
անհրաժեշտաբար անհնարին եյին համարում

հեղափոխական պայքարը պետության դեմ և
ամեն մի սոցիալական կոիվ այդ ուղղությամբ
համարում եյին «անիշխանական» ձեռնարկու-
թյուն։ Յեվ միաժամանակ դրա հետ միյեմնույն
սոցիալ-դեմոկրատները, չնայած իրենց դավա-
նած մատերիալիստական աշխարհայեցողու-
թյան, վոչ միայն հենվում եյին բուրժուական
պետության հատուկ ինստիտուտների և հիմնար-
կությունների վրա, այլև քննում եյին բոլորը
յուրորինակ վարդագույն ակնոցներով—և վորա-
կում եյին հաճախ «դեմոկրատական» անուշ
խոսքով։ «Դեմոկրատական» եր կառուցկիական-
ների տեսակետով այն ամենը ինչ ստեղծվում
և կազմակերպվում եր «Ժողովրդի մեծամասնու-
թյան» քվեարկությամբ, «Ժողովրդի» ձայնա-
տվությամբ և քվեարկությամբ։ Պրոլետարական
հեղափոխությունը Ռուսիայում, ըստ այդ տե-
սության, հակադեմոկրատական եր հենց նրա
համար, վոր հենվում եր բացառապես «բռնու-
թյան» վրա և չեր ցանկանում տեղեկանալ թե-
կուղ հենց «ընդհանուր ձայնատվության» միջա-
ցով ժողովրդի մեծամասնության կարծիքի մա-
սին։

Լենինը առաջինն եւ վինում, վոր անողոք
պարզությամբ մերկացնում եւ սոցիալ-դեմո-
կրատական ուրախ այդ հայեցողության բուր-

ժուական եյությունը։ Միյելնույն «Պետության և Հեղափոխության» մեջ և իր ուրիշ գործերում նա, հենվելով մարքսիզմի հիմնական դրության վրա, շեշտում ե, վոր ինքը «Դեմոկրատական պետությունը» յեկս իշխող բուրժուազիայի դասակարգային տիրակալության զորավոր կաղմակերպություններից մեկն ե։ Յեվ վորպես այդպիսին նա յերբեք ինքնիրեն, առանց «ուժի» գործողության և առանց «հեղափոխության» չի կարող անհետանալ կամ «մահանալ»։

Ինչ վերաբերում ե «գեմոկրատական» պետությանը հատուկ ուրիշ այն ինստիտուտներին, վորոնք ամրացնում են միյելնույն պետության հիմնաշենքը — դրանք ևս բուրժուազիայի տիրապետության կազմակերպական որգաններ են։ Այսպես կոչված «ազատ մամուլը», «ընդհանուր ընտրողական իրավունքը», «անաշառ դատարաննը», գրանք բոլորն ել իրենց վերացական և առերեվույթ «ժողովրդական» կեղեվի մեջ կրում են խիստ վորոշ և կոնկրետ դասակարգային բովանդակություն։

«Մամուլի ազատությունը» բուրժուական պետության մեջ պրոլետարիատի համար ֆիկցիա յե, քանի վոր պրոլետարիատը չի կարող ոգտվել այդ «ազատությունից» իր ուղածի համեմատ։ Բանվորական մամուլը ռուամկավարա-

կան պետության» սահմաններում շնորհիվ բուրժուազիայի տնտեսական գերիշխանության արդեն—չի կարող հաջող կերպով մրցել ավելի ուժեղ և հարուստ բուրժուական որդանների հետ։ Նա հալածվում ե և՛ պետության կողմից, վորպես պայքարող դասակարգի մամուլ։ Նա ճնշվում ե և՛ տնտեսապես համապատասխան որդանների կողմից։

Միյեմնույն բնույթն ունեն և ուրիշ «ազատությունները»։

Դատարանը «ռամկավարական հանրապետության» մեջ դասակարգային մարտակովի զենքերից մեկն ե նույնպես։ Բուրժուազիան իր «անաշառ դատարանի» միջոցով հալածում և «պատժում» ե բոլոր ըմբռուաներին և ապստամբներին, սեփականատիրական կարգերը խախտող և քանդող խմբակների ներկայացուցիչներին։ Ու դրանով արդեն նպաստում ե պետական հին հասարակակարգի ամրապնդմանը։ Ինչ վերաբերվում ե «գեմոկրատիայի» հիմնական սկզբունքին, այսպես կոչված «ընդհանուր ընտրություններուն իրավունքին», դա ևս շնորհիվ բուրժուազիայի դասակարգային դիկտատուրային, ունեցել ե և ունի լոկ ձեվական նշանակություն։ Որքան ել «գեմոկրատական» չեն ըստ ձեվի Ամերիկայում կատարվող ընտրությունները, այ-

Նուամենայնիվ վոչ վոքի համար գաղտնիք չե այն,
վոր հենց այդ «գեմոկրատական» ընտրություն-
ների մեջ խոշորագույն գերը պատկանում ե վոչ
այնքան գործափոր, վորքան դոր ծարան ա-
տեր և ունեվոր տարբերին։ Դրանք են իշ-
խում ամենուրեք։ Յեվ դրանք ել անց են կաց-
նում իրենց ցանկացած թեկնածուներին։

Բուրժուական կուսակցություններն ունին
հազարավոր լրագիրներ, ակումբներ, ագիտա-
տորական ուժեր։ Շնորհիվ նյութական կարո-
ղության դրանք հրապարակ են նետում միլիո-
նավոր հրատարակություններ և թուրքիկներ։ Յեվ
վողողելով այդպես ասպարեզը, հնչեցնելով ամեն
որ և ամեն տեղ իրենց խոսքը, կարողա-
նում են ուժեղացնել բուրժուազիայի գաղա-
փարական ազգեցությունը ժողովրդական ամե-
նալայն զանգվածների վրա։ Այդպիսով կապիտա-
լիստական հասարակակարգի և բուրժուական պե-
տության սահմաններում «ընդհանուր ընտրողա-
կան իրավունքն» ևս դառնում ե իրավես գա-
սակարգային դիկտատուրայի գենք։

Ահա ինչու «գեմոկրատիայի» իսկական
եյտությունը առանձնապես վորոշ յերեվում ե
Ամերիկայում—կապիտալիստական խոշոր տը-
րեստների և սինդիկատների այդ հայրենիքում։
Կանգնելով այդ «գեմոկրատական» պետու-

թյան կազմակերպման վրա, Լենինը շեշտում ե, վոր այդ պետության հիմնական հատկանիշերն են՝ չին ովն ի կությունը և զորքը: Յերկու այդ որդաններն ել ամենասերտ կերպով կապված են բուրժուազիայի հետ: Ինքը «դեմոկրատական հանրապետությունը» հենվում ե յերկու այդ որդանների վրա և դրանց միջոցով ե կիրառում բուրժուազիայի դասակարգային քաղաքականությունը:

Ահա ինչու «ավատականության անկումից հետո... բոլոր հեղափոխությունները զարգացրել, կատարելագործել ու ամրապնդել են այդ չինովնիկական ու ռազմական ապարատը («Պետ. և Հեղ.» եջ 37): Դրանից արդեն բղխում ե և պրոլետարիատի գործելակերպը:

Յեթե «պետությունը» դասակարգային տիրապետության որդանն ե, իսկ «դեմոկրատական հանրապետությունը» ո եպը եսսի աների ապարատ՝ ուղղված պրոլետարիատի դեմապահության ի վերաբերի ընթացքը հարկադրում ե, վոր հեղափոխությունը «կենաց ունացնեց ավելի մասն բոլոր ուժերը» ընդդեմ պետական իշխանության, հարկադրում ե հարց դնել վոչ թե պետական մեքենայի ի վերաբերի լավացման մասսին, այլ նըստական մասսին:

չնչացման մասին» (Եջ 38): Այլ խոսքով՝ պրոլետարիատը պիտի խորտակե ամենից առաջ «ռեպրեսիայի ազարատը»:

Բազմաթիվ ցիտատներով Մարքսից և Ենգելսից Լենինը ապացուցում է այն, վոր մարքսիզմի հիմնադիրները սկզբից մինչեվ վերջ կանգնած են յեղել հեղափոխական այդ տեսակետի վրա—և վոր միմիայն համաձայնական սոցիալիստների հետագա լուսաբանություններն են աղավաղման յենթարկել մարքսիզմի ուսմունքը:

Հին «պետական ապարատի» տապալումը անհրաժեշտ ենայեվ «պրոլետարիատի և գյուղացիության» յեղբայրական դաշինքի ամրապնդման համար: Նա ազատ ճանապարհ է բաց անում հեղափոխության զարդացման և ամենահիմնական նախապայմանն եւ սոցիալիստական հեղաշրջման:

«Ժողովրդական» հեղափոխությունը, ասում ե Լենինը, վորը շարժման մեջ եւ առնում իրոք վոր մեծամասնությունը, կարող եր «ժողովրդական լինել միմիայն ընդգրկելով թե պրոլետարիատը, թե գյուղացիությունը»: «Յերկուան ել միացած են նրանով, վոր «բյուրոկրատիք—ռազմական պետական մեքենան» նեղում, ճնշում, հարստանարում են նրանց: Փշրել այդ մեքենան, կոտրտել այն, ահա թե ինչ եւ պահանջում «ժո-

դովրդի», նրա բանվորների ու գյուղացիների ու պրոլետարների ազատ դաշինքի նախապայմանը, իսկ առանց այդ դաշինքի անհաստատ ե դեմոկրատիան և սոցիալիստական վերանորոգումն անհնար» (եջ 45): Բերված բնորոշումով Լենինը բնորոշում ե Մարքսի հայեցակետը 1871 թ. մեծ շարժման մասին—և միաժամանակ մեկնում ե նայել իր սեփական տեսակետը: Այդտեղ, ինչպես տեսնում ենք, «հին պետական մեքենայի» փշումը քննվում ե, վորպես «չքավորագույն գյուղացիների ու պրոլետարների ազատ դաշինքի նախապայման»:

Այդ հատուկ բնորոշումից բղխում ե բնամանհրաժեշտորեն և լենինի տեսությունը բանվորա-գյուղացիության մասին: Փշրված «դեմոկրատական պետության» վլատակների վրա այդ տեսության համաձայն պիտի հաստատվի բանվորա-գյուղացիական դիկտատուրա:

Մարքսը, խոսելով Փարիզի կոմունայի մասին և շեշտելով ֆրանսական պրոլետարիատի պատմական փորձի խոշոր արժեքը չեր գծել ավելի կոնկրետ կերպով «ապագա այս ի քաղաքական ձեւը ըստ այս կոմունայի»: Լենինը հենվելով Մարքսի և Ենգելմանի վրա նրանց ուսմունքի ճշգրիտ վերլուծության հետ տալիս ե «ապագայի» հենց այդ ձեվակերպումը:

«Փոխանցման» այն շրջանում, վորի ընթացքում պլիտի կազմվեր և կոփվեր պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը, և վորի ընթացքում պլիտի ձեվակերպվեր «բանվորա-գյուղացիական» պետությունը, վորպես պետությունից անպետության անցնելու» մի ետապ—պրոլետարիատը հենված «ուժի» վրա, պիտի վերջնականապես փշքեր իր հակառակորդի ուժը, վորպեսզի դրանով արդեն հարթվեր ճանապարհը դեպի կոմունիզմ։ Դրա համար ել պլրոլետարիատը կիրառելով առաջին անգամ ամենալայն դեմոկրատիզմը, ժողովրդական զանգվածների համար միաժամանակ «մի շարք բացառություններ ե անում ճնշողների, կապիտալիստ կեղեքիչների ազատության նկատմամբ»։

«Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մեծամասնության համար և կեղեքիչներին, ժողովրդի ճնշիչների բռնի ճնշելը, այսինքն՝ դեմոկրատիայից արտաքսել—ահա թե վորպիսի փոփոխության պիտի յենթարկվի դեմոկրատիան կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող անցողական շրջանում» (եջ 105)։

Յեվ ահա հենց այդ դերը հատկացվում ելուրհուրդներին։

Խորհրդային, կամ ավելի ճիշտ կիներ ասել Սավետական սիստեմը—բանվոր-գյու-

դացիական այն կառավարությունն ե հենց, վոր կատարում ե վերոհիշյալ ֆունկցիաները։ Մի կողմից նա ազատագրում ե ժողովրդական ամենալայն հատվածներին, կյանքի և գործի յե կանչում նրանց, արթնացնում ե հսկայական ժողովրդական զանգվածների ակտիվությունը և ինքնագործունեյությունը։ Իսկ մյուս կողմից «վշտում ե բուրծուազիայի դիմադրությունը» նշում ե հին բռնակալներին և արտաքսում նրանց ասպարեզից։

Խորհրդային կառավարությունը՝ բանվորության և գյուղացիության դիկտատորայի այդ որգանը ինարկի գործ ե դնում «ճնում և բռնություն»։ Սակայն այդ «ճնումը» նա գործադրում ե «կեղեքիչների և ճնշիչների» դիմ։ Այդ ճնշումը – անհրաժեշտ նախապայմանն ե բոլոր ճնշումների վերացման, դասակարգային հասարակության չքացման և իսկական ազատության հաստատման համար։

Կապիտալիզմից կոմունիզմին անցնելիս, կարդում ենք «Պետության և հեղափոխության» մեջ (եջ 106), ճնշումը դեռյեվս անհրաժեշտ է, բայց այստեղ ճնշողը փոքրամասնություն կազմող կեղեքիչները չեն։ Ճնշման հատուկ ապարատը, հատուկ մեքենան – «պետությունը» դեռյեվս անհրաժեշտ ե, բայց դա արդեն

անցողիկ պետություն ե, դա արդեն պետություն չե բառի բուն խմաստով, վորովհետեվ յերբ ճնշողը յերեկվա վարձու ստրուկների մեծամասնությունն ե, իսկ ճնշվողը փոքրամասնություն կազմող կեղեքիչները—ճնշումը համեմատաբար այնքան հեշտ, հասարակ ու բնական մի գործ ե, վոր դրա համար շատ ավելի քիչ արյուն պիտի թափվի, քան ստրուկների, ճորտերի, վարձու բանվորների ապստամբությունը ճնշելիս, վոր նա շատ ավելի արժան կնստի մարդկության վրա: Յ ե վ մ ի ա ժ ա մ ա ն ա կ կարող ե գոյություն ունենալ բնակչության այնպիսի խոշոր մեծամասնությունն ընդգրկող դեմոկրատիա, ուր ճնշման հատուկ մեքենայի անհրաժեշտությունն սկսում ե չըանալ:

Դժվար թե կարելի լիներ ավելի կարճ և խիտ կերպով բնորոշել «բանվորա-գյուղացիական պետության» բնույթը, քան այդ արված ե բերված պարբերության մեջ:

«Բանվորա-գյուղացիական» պետությունը այդտեղ, վորպես «բոնի հարկադրության» մեքենա հակադրվում ե իր եյտությամբ հին բուրժուական պետությանը: Սակայն նա ինքը, այդ պետությունը «փոխանցման շրջանի» որպան ե և հենց վորպես այդպիսին աստիճանաբար

վերացնելով՝ պետության անհրաժեշտությունը
պայմանավորող հանդամանքները «մահացման»
և յենթարկում և պետությունը:

Ապագա կոմունիստական հասարակությունը,
վորպես ապագասակարգային հասարակու-
թյուն, այլյեզս «պետական մեքենայի» կարիքը
չպիտի ունենա:

* * *

Լենինի այդ ուսմունքը ամենից շատ զայ-
րացրել ե սոցիալ-հայրենասերներին։ Առաջինը
դուրս ե յեկել այդ ուսմունքի դեմ կառցկին։
Նրա կողմից արծարծված հայացքները կրկնվում
են այս կամ այն տարբերությամբ նայել ուրիշ
սոցիալ-դեմոկրատների կողմից։ Ներկայումս գո-
յություն ունի արդեն հսկայական մի գրակա-
նություն «պետության և հեղափոխության»
փոխհարաբերության մասին։ Սակայն և այնպես,
«քննադատների» յերկարագույն այդ շարանը
մինչեւ այժմ չի կարողացել վոչ մի հիմնական
առարկություն բերել։ Լենինյան ուսմունքի
ամենաեյական կողմը նրանումն ե, վոր նա տե-
սական լինելով հանդերձ, ունեցել ե և ու-
նի գործնական արժեք։ Լենինը գուցե-
միակն ե քաղաքական հազվագյուտ այն գոր-
ծիչներից, վորոնք կարողացել են պրակտիկայով

հաստատել իրենց թեորիական հայացքները:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, սավետական կառավարության հաստատումը, սավետական հանրապետության սահմանդրությունը, նրա առորյա կյանքը—այդ բոլորը փաստական անառարկելի տվյալներով լրացնում, ամրացնում և հիմնավորում ե Լենինի տեսությունը:

Այնինչ ժամանակակից յեվրոպական պետությունների պարլամենտական պրակտիկան, Մեծ և Փոքր Անտանտի շուրջը խրմբված պետությունների գործնական կյանքը «դեմոկրատական» հանրապետությունների առորիանինքը քանոդում և փշում ե սոցիալ համաձայնականների թեորիական վողջ ուսմունքը «դեմոկրատիայի» մասին:

Եեվ ամենից լավ հաստատվում ե այդ բոլորը հենց Ռուսիայում, վորը մեր որերի մեծ հեղափոխության ընթացքում տեսել ե գրեթե բոլոր ձեվերը—գետմանյան Ռւկրայինայից սկսած, մինչեվ մենշեվիկյան վրաստանը: Վոչ վոքի համար այսոր այլյեվս գաղտնիք չե այն, վոր բոլոր տեղական այն «հանրապետությունները», վորոնք ստեղծվել եյին Ռուսիայում «դեմոկրատիայի» ձեռներեցությամբ, փաստութեն ծառայել են իմպերիալիստական պետություններին և կատարել հասարակ խրտվիլակ-

ների դեր։ Ամենալավ ապացույցը այդ փաստին տվել են կովկասյան հանրապետությունները՝ դաշնակցական Հայաստանը, մենչեվիկյան Վրաստանը, և մուսավաթական Աղբքեյջանը։ «Դեմոկրատական» այդ հանրապետությունները խուքով և գործով պաշտպանել են կապիտալիստական վողջ հասարակակարգը և վոչ մի ջանք չեն խնայել ամրապնդելու «հին կարգը»։ «Դեմոկրատական» այդ հանրապետությունները յենելով հենց «դեմոկրատիայի» շահերից, ամենասուր պայքար են մղել միմիանց դեմ և փոխադարձար հարվածել միմիանց։

Յեվ այդ բոլորի հանգեղ, բռնության, կեղծիքի և աշխատավորների շահագործման վրա հիմնված «դեմոկրատական» հասարակությունների հանգեղ շեշտակի տչքի յելնկնում բանվորացուղացիական» պետության ազատագրական այն դերը, վոր այսքան խոր մարգարյեռթյամբ նախատեսել և պրոլետարական հեղափոխության մեծ վարպետը—Լենինը։



ՀՀ Ազգային գրադարան



NL0835398

418

4693

280

✓